ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 սեպտեմբերի 2025 թվականի N 85-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՈՒՂԵՐՁԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 11-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 10-ի N 171-Ն որոշման 1-ին կետով ընդունված կանոնակարգի 13-րդ կետով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Ընդունել Հայաստանի Հանրապետության կառավարությանն ուղղված ուղերձ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -18	Դեմ -0	Ձեռնպահ -13
Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ		Ս. ՄԻՆԱՍՅԱՆ
Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ		Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ		Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Գ. ՂՈՒԿԱՍՅԱՆ		Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ		Շ. ԱՐԱՄՅԱՆ
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ		Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ		Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ		Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ		Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ		Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ		Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ		Վ. ԴԱՎԹՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ		Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ն. ՄԻՐԶՈՅԱՆ		
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ		
Ս. ՄՈՍՈՅԱՆ		

Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 16
ք. Գյումրի

ՀԱՎԵԼՎԱԾ՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ավագանու 2025 թվականի
սեպտեմբերի 16-ի N 85-Ա որոշման

ՈՒՂԵՐՁ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

1988 թվականի ավերիչ երկրաշարժը խոր հետք է թողել Գյումրու և գյումրեցիների տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական, հոգեբանական պատկերի վրա: Ու թեև արվել են զգալի աշխատանքներ երկրաշարժի հետևանքները վերացնելու համար, այդուհանդերձ դեռևս շրջանառության մեջ է մնացել «աղետի գոտի» հասկացությունը, դեռևս կան տնակներում ապրողներ, դեռևս կան անօթևանների խնդիրներ:

Հիմք ընդունելով միջազգային ու տեղական փորձը՝ Գյումրու զարգացմանը կարող է նպաստել ազատ տնտեսական գոտու (ԱՏԳ) և «ազատ քաղաքի» ռեժիմի անցնելու մոդելը: Մինչև այժմ եղել են ծրագրեր, ընդունվել են կառավարության որոշումներ, սակայն ԱՏԳ հարցը մնացել է թղթի վրա:

Այն, ինչ առաջարկվում է ստեղծել Գյումրիում, տարբերվելու է մյուսներից, քանզի ներդվելու է նաև, այսպես կոչված, ԱԶԱՏ ՔԱՂԱՔԻ մոդելը:

ԱԶԱՏ ՔԱՂԱՔԻ գաղափարը Գյումրին հարկային դրախտավայրի վերածելուն է միտված: Ըստ այդմ՝ Գյումրիում գրանցված և Գյումրիում գործող տնտեսվարողները, որոնք ունեն բացառապես Գյումրիում հաշվառված աշխատողներ, կստանան հարկային արտոնություններ:

Ազատ տնտեսական գոտու և ազատ քաղաքի ռեժիմները պետք է գործեն 25 տարով: Այդպիսով զարգացման նոր հնարավորություններ կստեղծվեն ոչ միայն Գյումրիի, այլ նաև Շիրակի մարզի ու ողջ Հայաստանի տնտեսության համար: Գյումրին կկատարի լոկոմոտիվի դեր:

Գյումրի համայնքում ազատ տնտեսական գոտու ստեղծմամբ ակնկալվող արդյունքներն են՝

- քաղաքի զարգացում,
- ավելի քան 15.000 նոր աշխատատեղ,
- շուրջ 500 միլիոն դոլարի ներդրում,
- գիտակրթական առաջընթաց:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Գյումրի համայնքի ավագանին պահանջում է Հայաստանի Հանրապետության կառավարությունից՝ Գյումրի համայնքի ամբողջ տարածքում ստեղծել ազատ տնտեսական գոտի: